ա/Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը զարգացումը և փոխելով առաջնահերթություն, մարզը 2017թ. հայտարարվել է «Սմարթ» մարզ:

Այդ գաղափարի իրականացման շրջանակներում մարզի

16

հանրակրթական դպրոցներում ստեղծվել են

«Սմարթ»

դասարաններ՝ հագեցած մեծ ժամանակակից տեխնիկական միջոցներով,

բարձր հզորության համակարգիչներով, սմարթ գրատախտակով:

Դասասենյակների վերանորոգումը,

կահավորումը,

համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը և կրթական արդյունքների խնայողությունների աշվին:

Կրթության որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մարզում ավելացնել նմանատիպ դպրոցների թիվը:

Հիմնական նպատակն է հանրակրթական դպրոցները նախապատրաստել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի, նոր կառուցվող

«Սմարթ»

կենտրոնի և նմանատիպ այլ կառույցների հետ համագործակցության ձևավորմանը

/ուսուցիչների վերապատրաստում, աշակերտներին ուսուցում,
ինքնուրույն հետազոտական և կիրառական գործունեության իրականացումն այլն/:

2018թ. նախատեսվում է 6 «Սմարթ» դասարանների հիմնում՝ Վանաձորի թիվ 1, թիվ 3,
Գյուլագարակի հիմնական, Լեռնապատի, Ալավերդու թիվ 4, Օձունի թիվ 2
և Լեռնահովիտի միջնակարգ դպրոցներում/

հնարավոր է նաև դասարաններում եցող դպրոցների քանակի ավելացում/ -
արժեքը 42.58 մլն. դրամ:

բ/ Մարզում կան շատ դպրոցներ, որոնք թերբեռնված են:
Դրանք հիմնականում գյուղական կամ սահմանամերձ դպրոցներ են:

Չկան անհրաժեշտ քանակությամբ, բարձրակարգ մասնագետներ, դասավանդող անձնակազմ
ըբավարարչի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, դե
ռևս շոշափելի թիվ են կազմում ոչ մասնագետները:

Արդյունքում ընդլայնելով ուսումնական գործընթացում տեղեկատվական-
հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառումը,
կստեղծվի բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների բազա,
կկազմվի ժամանակացույց՝ նախատեսելով շաբաթական առնվազն մեկ դպրոցի հետ հեռավար
ուսուցմամբ դասի անցկացում համացանցի միջոցով:

4. Մարզում ընդհանուր թվով 10 քոլեջների,
դպրոցների և մանկապարտեզների վերակառուցում, հիմնանորոգում և կառուցում
Մարզի միջարք կրթական հաստատությունների շենքային պայմանները բավարարչեն որակյալ
կրթական գործունեություն իրականացնելու համար: Այդ նպատակով նախատեսվում է 2018
թվականին կառուցման,
վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ իրականացնել մարզի թվով 10
կրթական հաստատություններում:

Արդյունքում՝ կիրականացվեն քոլեջների,
հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում և որ
ակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

5. Մարզում գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ռացիոնալաց
ման հնարավորությունների ուսումնասիրություն և գործողությունների ծրագրի կազմում:

ՀՀ Լեվոն Այվազյանի անվան ժողովրդի միջև 2016
թվականի դեկտեմբերին ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի ավաշխատա
տեղերի համար» ֆինանսավորման համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)
շրջանակներում ՀՀ Գնախարարության կողմից Հայաստանում Եվրոպական միության պատվ
իրակություն առաջարկություն է ներկայացվել Համաձայնագրով նախատեսված նախապայմա
նները և թիրախները փոփոխելու և ՀՀ Լոռու մարզում՝ Վանաձորի և Ստեփանավանի գյուղատնտ
եսական քոլեջներում,

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, գյուղատնտես
ական ուղղվածության միասնական ուսումնական կենտրոն (կլաստեր) ստեղծելու մասին:

Արդյունքում՝ կունենանք կրթության որակի բարձրացում,
որակյալ դասախոսական կազմի և ֆինանսական միջոցների կենտրոնացում:

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

Ուսանողներին ներհոսքայվարձերից և արտերկրից:
Ներկայումս առաջարկությունը քննարկման փուլում է գտնվում:

6.2 Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականին իրականացնելու է ՀՀ Լոռու մարզի Քոբայր համայնքի Քոբայրավանք վանական համալիրի սեղանատան, Ալավերդի համայնքի Սանահին վանական համալիրի Սբ Ամենափրկիչ եկեղեցու և Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի պարսպապատերի վերականգնողական և ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզում գործում են 19 մարզադպրոց, 3 մարզական ակումբ, մարզական հասարակական կազմակերպություններ:

Տարբեր մարզական թիմերում նախմբակներում ընդգրկված են մոտ 7000 երեխա: Լոռու մարզը թե հանրապետական և թե միջազգային մակարդակներում միջտաշքի է ընկել իր մարզական հաջողություններով:

Վանաձորում բացվեց ֆուտբոլի ակադեմիա, ինչը նորիս թանկ հանդիսանալու է մարզում ֆուտբոլ մարզաձևի զարգացման գործում:

2011 թ. նոյեմբերից Վանաձորում գործում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամ ի Լոռու մարզային կենտրոնը, որին պատակն է մարզի երիտասարդության ակտիվության խթանումը,

երիտասարդական կազմակերպությունների հզորացումը, տարբեր ոլորտներում երիտասարդության մասնակցության ապահովումը,

ինչպես նաև՝ ծրագրերի,

դասընթացների միջոցով մարզաբնակ երիտասարդների կարողությունների ու հմտությունների զարգացումը:

2018 թ.-ին ոլորտի միջոցառումների իրականացման համար նախատեսված գումարը 366.6 մլն դրամ է:

6.3 Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու տրակիբար ծրագրում մարզում սահմանվել է որպես ՄԶՌ-ի ոլորտային գերական պատակ:

Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժօգնության ոլորտների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ու ժեղացման ուղղությունները:

2018 թ.-ին ոլորտում իրականացվող միջոցառումները նպատակաուղղված են.

- Համայնքային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավմանը
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատմանը
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելմանը
- Շտապ բուժօգնության մատչելիության և ապասարկման որակի բարելավմանը
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- Նորածինների առողջության բարելավմանը, նորածնային հիվանդացության և մահացության կրճատմանը, մայրական մահացության կրճատմանը
- Վաղի ասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցմանը, առողջ աճի և զարգացման ապահովմանը

ՀՀ տարածքում

2017թ.

ներդրվել է էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգ (armed.am)՝ ազգաբնակչության բուժօգնության որակի և մատչելիության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի վերացման նպատակով:

Գործող էլեկտրոնային առողջապահության համակարգի շարունակական բարելավում ՀՀ Լոռու մարզի առողջապահական հաստատություններում:

2018թ.-ին մարզում կիրականացվեն 5.994 մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում.

- ✓ մարզի առողջապահական ընկերությունների կանխատեսվող բյուջեն, ներառյալ պետական պարտքերը վճարովի ծառայությունները)
- ✓ առողջապահական ընկերություններին նոր ժամանակակից սարքավորումներով հագեցում և նոր ծառայությունների ներդրում
- ✓ 2018

թվականին վճարովի ծառայությունների գները սահմանել շուկայական գներին համապատասխան/ոչ պակաս սոցիալական փաթեթով մատուցված ծառայությունների գների/

✓ Բժշկական կադրերով համալրում՝ կազմակերպելով դինամիկ սերնդափոխություն:

Առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեի մեջ վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը 31.12.2017թ.-ի դրությամբ 16.6 է, տարեսկզբի 13.8-ի համեմատությամբ:

2018թ.-ին նախատեսվում է վճարովի ծառայությունների աճ շուրջ 12%-ով, 2017թ.-ի համեմատ կամ կդառնա 851.6 մլն դրամ:

6.4 Սոցիալական ապահովություն

Լոռու մարզում ընտանեկան եւ սոցիալական նպաստ ստացողների թիվը 19443 է, եռամսյակային հրապատ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 968 (միջին ամսական), կենսաթոշակառուների թիվը 50874, հաշմանդամների թիվը՝ 18449: Ըստ ՄՁՌ-ի ՀՀ մարզերից ամենաշատ կենսաթոշակառուներ եւ հաշմանդամներ բնակվում են Լոռու մարզում:

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

2018թ.-ին սոցալաշտպանության բնագավառում նախատեսվում
7.34 մլրդ դրամի աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ընտանեկան եւ սոց. նպաստների,
հրատապօգնության վճարումներ:

2018թ.

ՄԶՌ-

ի սոցիալական ապահովության ոլորտի ուղղություններով առաջարկված 3 ծրագրերում ոլորտային
նպատակ է դիտվում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությ
ան ապահովումը

և որակի բարձրացումը:

Ծրագրերի կենսագործմանը կուղղորդվեն Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատ
ուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը որակի բարձրացմա
նը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավումը

/առաջարկվել է՝ «Լոռու

**մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների
շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների
գործունեության կազմակերպում և համակարգում»** թիվ 1 ծրագիրը/,

Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաս
տումը, Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովումը
/առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային

կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը/, Աջակցու
թյուն բնակարանային ապահովման քաղաքականությանը
/առաջարկվել են՝ «**Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնա**

կարանային ապահովում» թիվ 3 ծրագրերը/:

Ծրագրային աշխատանքների իրականացման համար ցանկալի է,
որ բացի պետական բյուջեի միջոցներից լինեն նաև որոշակի ներդրումներ միջազգային,
դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք կնպատակաուղղվեն ՄԶՌ-
ով ոլորտում նախատեսված աշխատանքների իրականացմանը:

2018թ.

սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ
է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը,
մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների,

հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը:

Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշ
խատանքներ,

որոնցում կարևորվում են և սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ
ի շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքների իրականացումին տեգ
րված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ,
որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է,

որի իրակա-

նացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարել
ավման հիմնախնդիրը:

2018թ.

սպասելիքները մեծ են,

քանի որ պետական ծրագրային աշխատանքներում Լոռու մարզում Համալիր կենտրոնների ձև
ավորումը օրակարգային է.

Վանաձորում վերանորոգվել է համալիր կենտրոնը,

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

Տաշիրում այն ընթացքի մեջ է, իսկ մյուս տարածաշրջանային կենտրոններում՝ Սպիտակում և Ստեփանավանում՝ կառուցում, Ալավերդիում տրամադրված տարածքների վերապրոֆիլավորում: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում և անսոցիալական ծառայություններ մատուցող ատույցների /պետական, ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը:

Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելուն ախապայման է բնագավառում ներգրավված սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

2018թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանքի նտրողների համար աշխատանքի նարավորությունները մեծացնելուն պատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իրն պատկամետ քաղաքականությունը:

ՄԶՌ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը:

2018թ. նորորակ էսպասվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասարի նարավորությունների ապահովման հարցում, այդ կնկալելի է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերին ախարարության թիրախավորված է տարեկան միջոցառումների ծրագրից ներկայում:

Կարևոր նշանակություն ունի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև և փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերը: Փախստականների հարցում դեռևս տեղաշարժ կա, իսկ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման հարցում շնորհիվ ՀՀ նախագահի հանձնարարականի և ՀՀ կառավարության 10.08.2017թ. թիվ 1016-Ն որոշման 2-րդ կետի պահանջների զգալի առաջընթաց է գրանցել 2018թ. սպասելիքները մեծ են:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1 Տրանսպորտի ճանապարհաշինություն

Լոռու մարզի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 891.1 կմ, այդ թվում՝

- միջպետական նշանակության՝ 218.9 կմ
- հանրապետական նշանակության՝ 264.3 կմ
- տեղական նշանակության՝ 407.9 կմ

Մարզում կան՝

- կամուրջներ և կամրջային անցումներ - 175 հատ

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

- ավտոմոբիլային թունելներ- 5 հատ

Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4%-ը:

Ըստ ՄՁՌ-ի մարզում լավ գնահատական ունեցող մարզային /տեղական/ նշանակության ա/ճանապարհների կշիռն ընդհանուրի նկատմամբ կազմում է 11.4%, բավարար՝ 28.8%, վատ վիճակի՝ 59.8%: Շահագործվող կամուրջներից առավել նշանակալի են վեցը, որից երեքը գտնվում են Մ6-ի վրա:

Մարզում առկա հատուկ տեխնիկայի քանակը բավարար չէ անհրաժեշտ քարաթափումների և սողանքների հետևանքների վերացման, ինչպես նաև սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման ապահովման համար:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Լոռու մարզպետարանի կողմից ՀՀ պետական բյուջեով և այլվարկային միջոցներով 2018թ.-ին ՀՀ Լոռու մարզում պլանավորվել է իրականացնել 7,359 մլրդ. դրամի աշխատանքներ, որից.

783.3 մլն. դրամ պետբյուջեի միջոցներով.

- Սրբեմանավանքաղաքի Սոս Սարգսյան-Միլիոնի փողոցի հիմնանորոգում,
- Սրբեմանավանքաղաքի Գ. Նժդեհի փողոցի հիմնանորոգում,
- Ալավերդի քաղաքի Հ.Թումանյանի փողոցի հիմնանորոգում,
- Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում

6575.7 մլն դրամ՝ վարկային միջոցներով.

- Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի 38.45 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերականգնում և բարելավում (առաջին փուլի ավարտը նախատեսված է 2018թ. վերջին):

Մարզում գործում են

62

ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ, որոնք սպասարկվում են 14 կազմակերպությունների կողմից: Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են մարզի խոշոր 3 քաղաքներում:

Ըստ ՄՁՌ-ի, ճանապարհային ցանցի անբավարար վիճակի եւ ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի 6 (Դաշտադեն, Հովնանաձոր, Քարաբերդ, Կաճաճկուր, Ծաղկաշատ և Ձորագյուղ) փոքր համայնքներից կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում:

Մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով սպասարկվող բնակավայրերի թվի ավելացման հետ կապված.

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի, 2018թ.-ից

նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի երևան (կամ մարզկենտրոն ընդհանուր շրջանակավայրերին կապող) երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով:

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ չշահութաբեր երթուղիներն ամբողջովին: 2018թ.-ին նախատեսվում է այդ չսպասարկվող բնակավայրերի թիվը նվազեցնել 1-ով և 42 բնակավայրեր, որոնք ասֆալտապատ ճանապարհով կապված չեն հիմնական մայրուղուն հիմնանորոգումների արդյունքում հասցնել 40-ի:

7.2 Խմելու ջրամատակարարումն ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, մատչելիև որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ուրտիզարգացման նպատակ ներից է: Մարզի համայնքների շուրջ 65-70%-ում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

ՄՁՌ-ի

ուրտրի հիմնախնդիր է հանդիսանում ջրամատակարարմանն ջրահեռացման համակարգերի մշակվածությունը: Ջրամատակարարման խնդիր ունի մարզի բնակչության 2.1%-ը, իսկ ջրահեռացման խնդիր ունեցող բազմաբնակարան շենքերում ապրող բնակիչները կազմում են մարզի բնակչության 3.0%-ը:

ՀՀ Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW

բանկի ֆինանսավորմամբ մարզի բնակավայրերի ջրամատակարարմանն ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված նախագծային աշխատանքներն ավարտին են հասցվել, որտեղներառված են

Վանաձոր քաղաքի որոշ թաղամասերի դեռևս չվերականգնված գոտիների եւ մարզի թվով 9 գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգերի վերականգնման աշխատանքները: 2018 թվականին նախատեսված է շինարարական աշխատանքների մեկնարկը:

2018թ. նախատեսվում է իրականացնել խմելու ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված աշխատանքներ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի եւ ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ –ի միջոցներով:

7.3 Գազամատակարարում

Լոռու մարզն ունի 56 համայնք, որից 7 քաղաքային բնակավայրում են գտնվում 49 բացառապես գյուղական բնակավայրերից կազմված համայնքներ, որոնք բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: Առ 01.01.2018թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 50(89.3%) եւ չգազաֆիկացված 6(10.7%) համայնք: Գազաֆիկացված չէ նաև 29 բնակավայր:

Ըստ ՄՁՌ-ի ՀՀ Լոռու մարզի 107 համայնքներից գազաֆիկացված էր 83 համայնք (77.6%), որտեղ բնակվում էին մարզի բնակչության շուրջ 97.0%: Անհրաժեշտ է լուծել լավ 24 համայնքների (22.4%) գազաֆիկացման խնդիրը, որտեղ բնակվում է մարզի բնակչության շուրջ 3.0%:

2018թ.-ին ոլորտում նախատեսվում են կապիտալ ծրագրեր, բնական գազի կենցաղային հաշվիչների ել գազի վթարային անջատիչ և փուլային բացում անային սարքերի տեղադրման աշխատանքներ՝ 146.96 մլն դրամ ընդհանուր ծեօով:

7.4 Էներգետիկա

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

2018թ.-ին մարզում նախատեսված է 4.211 մլրդ. դրամ արժողությամբ ծրագրերի իրականացում:

Վերակառուցման և զարգացման միջազգային (ՎԶՄԲ) բանկի վարկային ծրագրերով կիրականացվեն «Վանաձոր-1» 110/10/6

կՎԷՆԹակայանի վերակառուցման և «Լավար-Նոյեմբերյան» 110

կՎՕդային գծերի կառուցման աշխատանքներ:

Պետբյուջեի ֆինանսավորմամբ կիրականացվեն «Լոռի-1» հողմակայանի թիվ 2 և թիվ 3 գեներատորների վերանորոգման և սպասարկման աշխատանքներ:

«ՀԷՑ» ՓԲԸ-ին երդրումային ծրագրով կիրականացվեն Ճոճկան, Արճիս-Շնող, Ստեփանավան-Արմանիս,

Դսեղ համայնքները սնող միջին և ցածր ճնշման գազատարերի վթարային հատվածների կապի տալիս ծրագման, ԳԿԿ շենքերի կապիտալ ծրագման,

կենցաղային հաշվիչների և վթարային անջատիչ ազդանշանային սարքերի տեղադրման աշխատանքներ:

8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման և վերանորոգման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշմանն ապատակով հետազննումն երիանց կացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրաման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթեւան մնացած 345 ընտանիքի բնակապահովման հարցը:

3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի ելնարարական օբյեկտներին ախտազննախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացմանն ապատակներ են:

2018թ.-ին մարզում բնակարանաշինության, կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգումների համար նախատեսված ներդրումները կազմում են շուրջ 2.6 մլրդ դրամ:

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

9.1 Տարածքային կառավարում

ՀՀ պետական բյուջեի ցմարզ պետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ների նհատկացված գումարների վերաբերյալ /2017-2018թթ./

	2017թ. փաստացի	2018թ. նախատեսված	2018թ.-ին 2017թ.-ի նկատմամբ /հազ. դրամ/	2018թ.-ին 2017թ.-ի նկատմամբ /%-ով/
ՀՀ Լոռու մարզ պետարանի աշխատակազմի պահպանում	571776.0	583681.0	+ 11905.0	102.1

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հատկացված գումար, որից՝	6863386.4	6765837.9	97548.5	98.6
ա/ Կրթական ոլորտի	6847222.3	6750736.6	- 96485.7	98.6
բ/ Մշակութային ոլորտի	16164.1	15101.3	- 1062.8	93.4

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը 2017 թվականին փաստացի կազմել է 571776.0 հազ. դրամ: 2018 թվականին նախատեսված է 583681.0 հազ. դրամ, կամ ավելացել է 11905.0 հազ. դրամով /աճ՝ 2.1%-ով/, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բնականոն աճով:

Կրթության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների հատկացված փաստացի գումար 2017 թ.-ին կազմել է 6847222.3 հազ. դրամ: 2018 թ.-ի համար նախատեսված է 6750736.6 հազ. դրամ, կամ նվազել է 96485.7 հազ. դրամով /նվազում՝ 1.4%/: Նվազեցումը պայմանավորված է համընդհանուր ներառական կրթության անցմամբ և ֆինանսավորման կարգի փոփոխությամբ:

Մշակութային ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության/Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան/ պահպանման ծախսերը 2017 թ.-ին փաստացի կազմել է 16164.1 հազ. դրամ, 2018 թվականին նախատեսված է 15101.3 հազ. դրամ, կամ նվազել է 1062.8 հազ. դրամով /6.6 տոկոս/:

Մարզում 2018 թ. տարածքային կառավարման ոլորտում նախատեսվում է ապահովել հետևյալ արդյունքները.

- ✓ օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում
- ✓ տարածքային կառավարման հայեցակարգով նախատեսված մարզային նոր կառույցների (մարզային խորհուրդներ, հիմնադրամներ) ձևավորում,
- ✓ մարզպետարանի աշխատակազմի աշխատատեղերի կահավորում և տեխնիկական հագեցում, տեղեկատվական, կառուցվածքային կառավարչական գործառույթների բարելավում,
- ✓ մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների փոխհարաբերությունների սերտացում,
- ✓ մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների շարունակում,
- ✓ մարզպետի կողմից իրականացնել իրավական և մասնագիտական վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների իրականացման նկատմամբ,

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

✓ մարզպետարանի և համայնքապետարանների մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում՝ սուբյեկտների թվի 25 %-ի չափով,

✓ մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը,

✓ մարզպետարանի և ՏԻՄ-երի, մասնավոր հատվածի միջև համագործակցության մակարդակի բարձրացումը:

9.2 Տեղական ինքնակառավարում

2017թ. ՀՀ Լոռու մարզի համայնքներում 1 շնչին ընկնող սեփական եկամույնները (221.1 հազ. մարդ) փաստացի կազմել է 8.4 հազ. դրամ, 8.5 հազ. դրամ դրամ պլանավորված իրականաց, 2018թ. համարն ախապեսվել է 10.5 հազ. դրամ կամ մարզում բնակչության 1 շնչի հաշվով սեփական եկամույնները 2018թ. ին պլանավորվում է ավելացնել 25%-ով:

Լոռու մարզի համայնքների սեփական եկամույնները 2017թ. համարն ախապեսվել է 1,867,661.3 հազ. դրամ, փաստացի կարարումը կազմել է 1,852,849.9 հազ. դրամ, իսկ 2018թ. համարն ախապեսվել է 2,315,227.4 հազ. դրամ, որի աճը 2017թ. պլանին կարմամբ 23.4% աճ, իսկ 2017թ. փաստացի ին կարմամբ 25.0% աճ և ընդհամենը եկամույնների մեջ սեփական եկամույնների տեսակարար կշիռը նախապեսվել է 33.6%:

2018թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.

- ✓ համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը,
- ✓ տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքապետարանների աշխատակազմերի տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացումը,
- ✓ համայնքների զարգացման ծրագրերի համապատասխանեցումը մարզի զարգացման ռազմավարությանը.
- ✓ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը,
- ✓ համայնքների բյուջեների սեփական եկամույնների աճի ապահովումը նախորդ տարվա համեմատ,
- ✓ համայնքապետարանների աշխատակազմերի գործունեության արդյունավետության բարձրացում, մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,
- ✓ համայնքների զարգացման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը,

- ✓ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավումը և հասանելիության ապահովումը:

9.3 Քաղաքացիական հասարակություն

2018 թվականին ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովելուն պատկվում արգելափակումներ են հանդիսանում, ՏԻՄ-երի, ՁԼՄ-ների և մարզի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- մարզում գործող ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետանհրաժեշտ համագործակցության կազմակերպում՝ հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելուն կատառումներով,
- պարբերաբար կազմակերպել հանրային քննարկումներ՝ հանրային կարևորություններ կայացնող հարցերի առնչությամբ,
- ապահովել մարզպետի, մարզի համայնքների ղեկավարների, ավագանու անդամների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև մարզի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրագործման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,
- ապահովել մասնակցային կառավարումը և հասարակական կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և բնակիչներին մասնակցեցնել որոշումների ընդունմանը և բարձրացնել հանրության իրազեկվածության աստիճանը,
- շարունակել մարզպետարանի և համայնքների պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների՝ համայնքների կատարվող այցելությունների լուսաբանման աշխատանքների շարունակական կազմակերպում:

9.4 Արտակարգ իրավիճակների բնակչության եւ տարածքների պաշտպանություն

Լոռու մարզը՝ աղետների առումով, գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության, մարզի և համայնքների կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է համայնքի անվտանգ լինելու համար:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում 2018 թվականի հիմնական միջոցառումներն են՝

- Համայնքների կողմից աղետների ռիսկի կառավարման պլանի մշակում
- ԱՌԿ պլանից բխող ծրագրերի մշակում

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստվածության բարձրացման նպատակով 2018 թվականին անց են կացվելու ուսումնավարժություններ:

Մյուս հիմնախնդիրը զարնային հնարավոր հեղեղումների կանխարգելումն է, որին պատակով մարզի տարածքում պետք է կատարվեն գետերի հունների, հեղեղատարների մաքրման և ափապաշտպան կառույցների վերանորոգման աշխատանքներ: 2018թ. նախատեսվում է համայնքների բյուջեների միջոցներով իրականացնել հեղեղատարների մաքրման և նորոգման աշխատանքներ:

10. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Լոռու մարզի 2018 գործունեության ծրագրի համար կարևորվում է մշտադիտարկումը, որը կիրականացվի մարզային վարչակազմի կողմից՝ մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգի միջոցով: ՄԳ համակարգը կվերահսկի Ծրագրի կատարումը, կամփոփի 2018 թվականի գործունեության արդյունքները՝ ՄՀՌ նպատակներին հասնելու առումով:

Մոնիտորինգի տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԳ համակարգից ստացված արդյունքները: Այն կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

1. տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները,
2. հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ՄԳ արդյունքներն ամփոփող խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

11. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Լոռու մարզի 2018թ.-ի գործունեության ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 59.99 մլրդ. դրամ, որից

հազ. դրամ

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2018թ.	59,991,915.9
	որից՝	
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	34,631,882.4
	սեփական միջոցներ	21,271,860.4
	վարկային միջոցներ	13,360,022.0
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	352,234.5
3	Համայնքային բյուջե	287,189.0

ՀՀ Լոռու մարզի 2018 թվականի գործունեության ծրագիր

4	Մասնավոր ներդրողներ	20,980,360.0
5	Այլ աղբյուրներ	3,740,250.0